

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

1974 թվականի հունվարին լրանում է Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի հրատարակության 30-ամյակը:

1944 թվականի հունվարին Ամենայն Հայոց Կաթողիկոսության ազգընտիր տեղակալ տ. Գևորգ արքեպ. Չորեքչյանի նախաձեռնությամբ հրատարակվում էր Մայր Աթոռի նոր պաշտոնաթերթը:

Այնուհետև 1945—1954 թվականներին «Էջմիածին» ամսագիրը լույս էր տեսնում, լուսահոգի Տ. Տ. Գևորգ Զ կաթողիկոսի հրամանով:

1955 թվականի հոկտեմբերից մինչև առ այսօր «Էջմիածին» ամսագիրը հրատարակվում է Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի անմիջական հսկողությամբ և հրամանով:

«Էջմիածին» ամսագիրը հանդիսացավ «Արարատ»-ի շարունակությունը, նրա եկեղեցագիտական, պատմա-բանասիրական, հայագիտական, հայրենագիտական ավանդույթների շարունակողն ու ժառանգորդը նո՛ր հանգամանքներում և նո՛ր իրադարձությունների մեջ:

Վեհափառ Հայրապետի հրամանով և բարեհաճ կարգադրությամբ ու խմբագրությանն նախաձեռնությամբ հրատարակության է պատրաստվում «Էջմիածին» ամսագրի 30 տարիների բոլոր նյութերի մատենագիտությունը:

Մատենագիտությունը կազմվել է ժամանակագրական-այբբենական կարգով, որը նրան տվել է յուրահատուկ փաստագրական արձանագրության բնույթ:

Մատենագիտության մեջ նկարագրված են ամսագրում լույս տեսած հայրապետական կոնդակներ, քարոզներ, ճառեր, ուղեվորություններ, ինչպես նաև կրոնական, եկեղեցագիտական, պատմա-բանասիրական, հայրենագիտական և այլ բնույթի բոլոր նյութերը, Մայր Աթոռի և մեր թեմերի եկեղեցական-ազգային, մշակութային և հայրենասիրական կյանքի և գործունեության պատկերը:

Մատենագիտությունը կունենա նաև օժանդակ առարկայական, հեղինակային, թարգմանիչների, տեղանունների և անձնանունների ցանկեր:

Մատենագիտությունը կազմել է մասնագետ Սեդա Կոծինյանը: Այն խմբագրել են Ա. Հատիտյանը և Ս. Քոլանջյանը:

1973 թվականի ապրիլի համարից սկսած «Էջմիածին» ամսագրի հերթական համարում կտպագրվի մատենագիտությունից մի մասնիկ:

«Էջմիածին» ամսագրի հրատարակությունը մշակութային ուշագրավ երևույթ է հայ լրագրության պատմության և Մայր Աթոռի ժամանակակից տարեգրության մեջ, հայրենական մշակույթի ծաղկման այս փառահեղ օրերին:

«Էջմիածին» ամսագիրը դարձել է ոչ միայն եկեղեցագիտության, եկեղեցական արվեստի ու պատմության, հայրենասիրության և արդիականության հարցերին նվիրված ամբիոն, այլ նաև հայագիտության լուրջ հրատարակություն, որին իրենց թանկագին աշխատակցության բաժինն են բերել և՛ մայր հայրենիքի, և՛ սփյուռքի հայ բանասիրական մտքի պայծառ ու վաստակավոր հոգևորական ու աշխարհական ներկայացուցիչները:

Վստահ ենք, որ «Էջմիածին» ամսագրի մատենագիտության հրատարակությունը օգտակար կլինի և՛ հայագիտությամբ զբաղվող մեր գիտնականներին, և՛ ընթերցողների լայն շրջանակին:

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ